

№ 11.

Վ. ՓԼՓԼՉԵԱՆ

ԱԲԱՂԱՅԻ ԴԱՇԴՈՒՄ

(ՊԱՏՄԻԱԾԲ)

ԳԻՆՆ Լ 4 ԿՈՊ.

ԲԱԳՈՒ
ՊԱՐԱՆ „ԱՐՐԵ“
1903

891.99
Կ-31

13 APR 2011

U.S. DEPARTMENT OF JUSTICE
FEDERAL BUREAU OF INVESTIGATION

(continued)

2011
APR 13 2011
FBI - MEMPHIS

U.S. DEPARTMENT OF JUSTICE
FEDERAL BUREAU OF INVESTIGATION

13 APR 1951

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

891.99

4-31 Այ

ԱՐԱՂԱՅԻ ԴԱՇՏՈՒՄ

(Պ Ա Տ Մ Ի Ա Մ Բ)

1001
4406



Բ Ա Գ Ո Ւ
Տ Պ Ա Ր Ս Ե Ն «Ա Բ Օ Ր»
1903

28 .08. 2012

ՄԻՈՅՆՍԻ ԴԵՍՐԱԳՄ

(Գ Մ Ս Կ Ն Յ Մ Ր)

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 Августа 1903 г.

2. 11

ԱԲԱՂԱՅԻ ԴԱՃՏՈՒՄ

I.

Ընդհանուր մի նիդակախօսյի առիթով— որ յաճախ էր տեղի ունենում Սբաղային իշխող քիւրդ ցեղապետ Մուսա աղայի վրանների առաջ— ամէն կողմից գալիս հաւաքուով էին դաշտի միւս մանր ցեղապետները, ինչպէս նաև Մուսա աղայի որդի Մահմուդ աղան, որ վրան խփել— բնակուով էր դաշտի հիւսիսային բլուրների ստորոտում:

Լուսաբացից սկսած, ամէն կողմից խումբ առ խումբ երևում էին ձիաւորներ, հեծած՝ աշխտյժ, կատայի նժոյգների, ցեղապետնին առջևից, նիզակների սուր ծայրերը փալփիւններով օդի մէջ, սպիտակ շղարշեայ թիկնոցները հովին տւած:

Նժոյգները խրխնջում էին ու կայտուով բարձրահասակ խոտերի և ծաղիկաւէտ մարգերի մէջ քայլելով. ձիաւորները դւարթ, ոպկորւած առաջիկայ գինախաղով, բարձրագոյն վիճում

էին և ճգնում տեսնելու թէ՛ դաշտի այս—այն կողմից երեցող խմբերը սր միւղիւրի կամ սր ցեղի մարդիկն էին:

Արևը դեռ չէր ծագել, սակայն արևելքից մի լոյծ ու չքեղ կարմրութիւն սկսում էր տալու և չորիգոնի բարձրերում, սպիտակ ցանցը իւր ամպերի եզերքներին: Մշուշը, որ բաց մանիշակագոյն էր դարձել այժմ, սկսում էր երևան հանել իր միջից բլուրներ, մացառոտ գետափը: Եւ գետը, սրբապոյտ, հոսանուտ արծաթի նման՝ գալարում—կտրում էր դաշտն ու մի ծայրով անհետանում գէպի հեռուոր խորքերը:

Մշուշի հետ հեռւից երևում էին գոյնզոյն, սև և կապոյտ հագուստներով աւելի, կարմիր կամ ճերմակ նժոյգներ հեծած այլ խմբեր և, արշաւակի կետրոնանում էին գէպի Մուսա աղայի տաղաւարները:

Քարմ, սրանչելի դեփիււտով միասին, օդը լի էր դաշտից ելած բազմատեսակ, գոյնզոյն ծաղիկների արբեցուցիչ բուրմունքով, լի նաև հարիւրաւոր թռչունների դայլայլով: Մարդա հասակ խոտերի մէջ փաթիւում էին զզզուն վտակներ, թաւալում բլուրներից, ցայտում, շիթերով դարդարում կանաչ թաւհայ մարդագետիները:

Մուսա աղայի երեք մեծ վրանների առաջ վառուղ կրակի ծուխը անօտ բարձրանում—տարածւում էր դաշտի կողմը և կարծես նշան էր ներկայանում հասնող խմբերին:

Եւ Արաղայի մեծ ցեղապետը լացւած, ազօթքն արած նստել էր վրանի առաջ: Հարիւրաւոր ոչխարներից բազկացած հօտը փոշի հանելով և բառանչելով՝ գէպի բլուրն ի վեր էր դնում, մինչ մի խումբ քիւրդեր էլ զբաղւած էին վրանից մի քիչ ցած պարզւած հարթ տարածութիւնը մարբելու՝ նիգախախաղի համար:

Ծերունի էր Մուսա աղան, 60-ից անց, սակայն դեռ միմիայն ալելաոն էին մտերբը: Ծնօտը ամիլած, քնչացրը հաստ ու երկար, գոռոզաբար ոլորում, ծայրերով ցրցւում էին գէպի ականջները: Երկարահասակ ու լայնալանջ կրում էր նա նուրբ կապոյտ ասէ վերնազգեստ, Հալէրի կարմիր մետաքսից գբուն (բաճկոնակ), գլխի ասեղնագործ քէօլդը ոլորուն մետաքսեայ եազմաների միջից պարզւում էր իր վնջաւոր գագաթը, ստներին կրում էր ցեղապետական, մարուր օժած կարմիր կոշիկներ:

Նրա առաջ ցած աթոռակի վրայ գրել էին սուրճ, կաթ, կարագ ու մեղր, և երկու քիւրդ քիչ հեռու կանգնած, պատկառանք սպասում էին աղայի հրամաններին:

Եւ մինչ հեռաւոր խմբերը մօտենում էին, բլուրների հտեից սկսում էին հրեալ արևի առաջին օտար շողքերը, որոնք դալիս լողանում էին ցօղալից խոտերի մէջ և տարածւում—սուկեղօծում ընդարձակ դաշտի ծաղկաւէտ տարածութիւնը...

II.

Ամենից առաջ գետեզր հասաւ Մահմադ աղան իր շքախմբով: Միւս խմբերը կետրոնացան այնտեղ և այդպէս, մեծ ցեղապետի որդին, հարիւրի շափ ձիաւորներով շրջապատւած, վրանների առաջ եկաւ:

Մուսա աղան ժպիտը դէմքին ձեռքը պարզեց իր հսկայ սրբուն, թողեց որ համբուրէր, ինքն էլ շրթունքները կպցրեց նրա ճակատին և հրաւիրեց նստելու կողքին:

Ամենքն իսկոյն, պատկառելի հեռաւորութեան վրայ կանգ առած՝ ցած թռան ձիերից. կարմիր կոշկաւորներն առաջ անցան, նրանց հետեցին միւս ցեղապետները և Մուսա աղայի երկու կողմը շարւելով կիսակլոր՝ նստեցին մօտ տասը մանր—մունր ցեղապետներու միւզիքներ:

— Գալուստներդ բարի. խօսեց Մուսա աղան քաղցր և ուրախ ժպիտով—ինչ կայ,

ինչ չը կայ դաշտում. ինչ նորութիւններ կասես մեզ, Մահմադ աղա:

Որդին իր հաստ մարմնով շարժեց տեղումը, ժպտեց, քիչ լռեց և ասաց.

— Ինչ պիտի լինի... Առտում ենք, որսում, քնում ենք—զւարճանում... Մզտոն միայն քաղաքից ելել լուր բերաւ, որ Աանայ փաշան Բերկրէ է ուզում գալ... Մէկ էլ որ, ֆրաները (հայերը) էլի խմբով, ամեն բան թողնում են և ուստի հողը անցնում...

— Հա՛. վրայ տաւ Մուսա աղան—ես էլ լուր ունիմ: Հանգիստ չեն թողնում նրանց. ի հարկէ կ'երթան... Լօ՛, երկրագործին տուրքերի թեթևութիւն է հարկաւոր... երկրագործին փոք սրտեղից է, որ փողով տուրքը տայ...

— Դէ՛հ, մենք էլ այդ լաւ դիտենք, կորբանդամա (քեզ մատաղ), ասաց մի ցեղապետ—փող չենք առնում մենք, ցորեն, գարի, տաւար...

— Փլաները աշխատաւոր են, ես ու իմ Ասուածը. ձայնեց այն կողմից մի ուրիշ ցեղապետ—լաւ գործում են, լաւ էլ տուրք տալիս... Չը պէտք է վախեցնել այսրան, որ մեր հողերը թողնեն ու գնան:

— Փլան շատ վախկտ է. ասաց Օսման աղան—կամ պիտի հնազանդի կամ թողնէ

փախչի։ Մեր դաշտի նապաստակը նրանից սըրտոտ է... Իմ հողիցն էլ 10—15 տնւոր փախել են, ուշ իմացայ. թէ չէ՛ սո՛վ կը թողնէր. եզին էլ կը թողնեն որ աշխատանքից փախչի... Եւ այսպէս, ցեղապետներից իւրաքանչիւրը մի կարծիք յայտնեց հայերի մասին։ — Մէկը գովեց նրանց հաւատարմութիւնը, միւսը, դտաւ որ այդ հաւատարմութիւնը մնում է նրանց մէջ փախից. երրորդը յայտարարեց որ հայը չարքաշ է, անասունից էլ աւելի դիմացկուն. միւսը առարկեց թէ՛ էշն էլ չարքաշ է, որովհետեւ ստիպում են։ Աերջապէս մի քանիսներն պնդեցին որ հայը համբերող է առհասարակ ու այդպէս ծնւում է բնականից, ինչպէս որ կը բնականից ծնւում է լուծի համար։

Այստեղ Մուսա ազան, որ մինչև այդ լուստում էր, արհամարհական ժպիտ դէմքին՝ կարգաց իր վճիռը։ — Հայը, ասաց նա— հաւատարիմ է որովհետեւ փախնում է. չարքաշ է որովհետեւ ստեղծւել է միայն ծառայելու համար. և դիմացկուն է, որովհետեւ ծեծի սովոր է։ Բայց— աւերացրեց նա հեղեղութեամբ— հայը ունի այնպիսի յատկութիւններ, որ քիւրդը չունի... — Հէ՛ս... կանչեցին մի քանիօրը— քիւրդը չունի...

— Հայը, ասաց նա— հաւատարիմ է որովհետեւ փախնում է. չարքաշ է որովհետեւ ստեղծւել է միայն ծառայելու համար. և դիմացկուն է, որովհետեւ ծեծի սովոր է։ Բայց— աւերացրեց նա հեղեղութեամբ— հայը ունի այնպիսի յատկութիւններ, որ քիւրդը չունի... — Հէ՛ս... կանչեցին մի քանիօրը— քիւրդը չունի...

— Հայը, ասաց նա— հաւատարիմ է որովհետեւ փախնում է. չարքաշ է որովհետեւ ստեղծւել է միայն ծառայելու համար. և դիմացկուն է, որովհետեւ ծեծի սովոր է։ Բայց— աւերացրեց նա հեղեղութեամբ— հայը ունի այնպիսի յատկութիւններ, որ քիւրդը չունի... — Հէ՛ս... կանչեցին մի քանիօրը— քիւրդը չունի...

— Հէ՛ս... կանչեցին մի քանիօրը— քիւրդը չունի...

— Չունի, պնդեց ցեղապետը— Հայը, որինակ, սատանայ է, խորամանկ է. նրան խաբելը հեշտ չէ։ Եւ դրա համար էլ, որքան ճնշւում է, որքան կողոպտւում, այնքան խոնարհ է դառնում, զժուժանում և... հարստանում... Քիւրդը չունի այդ յատկութիւնը. քրդի սիրտը լեզւի ծայրումն է և ձեռքիս ավի նման լերկ, առանց ծածկոցի։

Թէև ցեղապետի դէմքից ու ձայնից երեւում էր որ նա ծաղրով և արհամարհանքով էր ասում այդ բոլորը, բայց Մահմուդ ազան տաքացաւ։

— Ի՛նչ... բացականչեց նա— միթէ իմ հայրը երկու լեզւանիութիւնը լաւ յատկութիւն է համարում... Հայի խորամանկութիւնն էլ նրա զժուժուժեան արդիւնքն է. ահա թէ ինչ։ Ազնիւ, մաքուր սիրտ ունեցող մարդը պէտք չունի խորամանկութեան... Ես կրքէք չէի կամենալ հայի նման հպատակ ունենալ, ասորին շատ աւելի լաւ է։

— Ասորին մեզ խաբել չի կարող. ժպտաց Մուսա ազան զւարճանալով, որ որդին տաքանում էր։ — Հայը մեզ միշտ խաբում է. խաբում է— երբ կարծում ես որ հաւատարիմ է խաբում է երբ հնազանդ է. նոյնպէս խաբում է՝ երբ համբերող է... Այն, շատ էլ ախորժալի

չէ հայ հպատակ ունենալը. բայց ասորին էլ մի բան չէ... Ես կը կամենայի միշտ քիւրդերի ցեղապետ մնալ. քիւրդը ազնիւ է, քաջ և մարտը սիրտ ունեցող...

Արևն արդէն բարձրացել էր այժմ և սկսում էր դուրս գալ բլուրների ետևից: Արանների առաջ փուռած սուերը կարճանում էր և հեռու կանգնած քիւրդերը սկսել էին անհամբեր դառնալ:

Բայց Մահմուդ ազան, որ տաքացել էր, գոչեց.

— Լաւ, ազաներ. խօսք չը կայ որ քիւրդից լաւ ազգ չը կայ աշխարհիս երեսին: Բայց, տեսնենք, եթէ այնպէս լինի որ Աստուած մեզ առաջարկի թէ «Ել—աղասիններ, ահա ձեզ հայ, թուրք և ասորի, ընտրեցէք թէ որին հպատակ կը վերցնէք» — Ինչ կատէրք, ո՞վ որին կը գերադասէր:

— Երեքն էլ. ծիծաղեց մի ցեղապետ և սրճի բաժակը ծառային պարզեց— երեքն էլ եկամուտ բերող ապրանքներ են:

— Այդ չհղաւ, միջամտեց Մուսա ազան — ի՞նչ սրդին ասաց որ պիտի երեքից միայն մէկը ընտրել... Ես իմ կողմից՝ ոչ մէկին չեմ վերցնիլ այգալիսի դէպքում. երեքն էլ ոչինչ ցեղեր են:

— Այդ էլ չհղաւ, հայր, ժպտեց Մահմուդ ազան— եթէ ստիպէ որ անպատճառ մէկն ու մէկը վերցնեն...

— Ես թուրքին կ'ընտրեմ. խօսեց կարմիր կոշիկաւոր մի ցեղապետ— ինչքան էլ լինի՝ նախ հաւատակից է, յետոյ՝ աւելի մարտը ազգ է և մանաւանդ... սիրուն կանայք սնին:

— Ասենք ասորիներն էլ սիրուն կանայք ունին, հայերն էլ. առարկեց Ջաֆար ազան — բայց, տակի մնացած երկուսից ես ասորին կընտրեմ, թէև նա մի քիչ ըմբոստ է... Սիրում եմ ես անսանձ ձիերի, կաւոյ, դէմ դնող անասունների զսպել, քան մի ոչխարի հետ գործ ունենալ. ոչխարի, որ խփելու համար դեռ փայտրդ չը բարձրացրած՝ մէջքը դէմ է տալիս և լեզուն կախում...

— Ի հարկէ. ասաց Օսման ազան — ինչի նման է, որ միշտ խօսքը լսեն և դու լսիլու, բարկանալու հաճոյքը չունենաս... ինչի նման է օրինակ, հանդարտ տղան, որ միշտ լսում է քեզ, հնազանդ է, համակերպող, համբերող... Ձէ, ՚ի հարկէ, ասորին լաւ է:

Եւ երբ բոլորը ծիծաղում էին Օսման ազանի խեղկատակօրէն ասուած այդ խօսքերի վրայ, մի ծերունի ցեղապետ, որ մինչև այդ լուռ էր, ասաց յանկարծ.

— Չահել էր, անդաներ: ձիշտ է, հայր մեղկացնող է, զէնքերը անգործ, սուրը ժանգոտ թողնող, բայց կերակրող է: Հայն է, որ ամենից աւելի անտրտունջ տալ զիտէ: Ինչ որ ուզենաս՝ կը տայ.— ստացւածք, հոգի, պատիւ... Ինձ թողէր հային. թափած ատամներ ունեցող գայլի պատառ է...

Այս անգամ Մուսա աղան էլ բարձրաձայն ծիծաղեց. յետոյ, սորի ելաւ և ասաց.

— Բաւական է. Հ'արժէ խօսել... սկսենք նիզակախաղը:

Եւ մինչ իրարանցումն սկսում էր քիւրզերի մէջ, արևը հասել ուղողում էր վրանները իր պայծառ ճառագայթներով: Յօդի և ջրային շոգիները նօսը մշուշով քօղաւորում էին դաշտի մեծ տարածութիւնը: Փշում էր դով քամի, սր վեհափառօրէն օրօրում էր խոտերի կատարները, կռացնում գէպի միմեանց, սուրալով սահում նրանց զլուխների վրայից և գալիս էր ծածանելու նիզակախաղի ելած քիւրզերի բարակ թիկնոցները...

III

... Բայց զեղից Քէփէրիզի վրայով Վան գնացողի համար մի կատարեալ գրախտ է թւում Աբազան, երբ 10-12 ժամ անընդհատ լերկ ժայռերի, հրաբլխից գոյացած լեռնակոյտերի և սև ու ժանգոտ սարերի միջով քայլելուց յետոյ, յանկարծ բացւում է նրա գեղատեսիլ սարածութիւնը, ուր գայնագոյն ծաղիկներ, մարգահասակ խոտ, գետ և փշոյ դով քամին յաջորդում են միմեանց:

Կարծես դժօխային չորութիւնից ու տապից ելել՝ մտնում ես գրախտային բուսականութեան մէջ: Ոտներիդ տակից սկսած՝ թաւիչ կանաչը, քանի դաշտը իջնում է, ստանում է խոտային անտառի մեծութիւն, ուր ձիւտորը կարող է թաղել՝ առանց երեւալու: Վտակները, շոշափելով շքեղ ավերը՝ սահում սօգոսկում են կապոյտ ու դեպին մեծ արտերի միջով. գետը ոտստում է խոխոնջիւնով՝ վերջին ժայռերի զլխով և մեղմիկ ծորում գէպի մացառուաները...

Սև, լերկ ժայռերի մէջ տիրող ահաբեկ լուծեան, սուր կերպով յաջորդում են՝ բնութեան շշուկը, թռչունների ճուղիւնը, այս-այն կողմ ցրւած նախիրների բառաչները: Այստեղ

կեանքն է, մինչ քիչ առաջ տասը ժամ անընդհատ քայլում էիր խորին լուսթեան մէջ, վախենալով ինրդ էլ ձայն հանել:

Այստեղ գէմբդ զւարթանում է, թորերդ լայնանում, սիրտդ հրճուում. կամենում ես դնել կանչել, երգել, աղմկել...

...Ու մենք, որ ոչ մի բոպէ չէինք կանգ առել այն լուռ ու մուռլ լեռների մէջ, որ ըշտապում էինք արագ անցնել այն դաժան, վախ ազդող ամայութիւնից, երբ Արադայի ծայրը հասանք, ազատ շունչ առինք: Առանց իրար յայանելու, միահամուռ զգացմունքով ցած թըռանք ձիերից, թողինք նոցա՝ լայնացած ուրիշ գունքով՝ դալար խոտին վազելու և փուկցինք մարգագետինի վրայ, անուշահոտ գիներբուկների կողքին:

Այստեղ կարծես դարուն էր, թէի Յուլիսի մէջ էինք: Այստեղ մշտակահն թաց ու վտակներով ջրած հողի մէջ՝ գարնանային ծաղիկների էին բուսնում միշտ:

Մի վճիտ աղբիւր, սև սարերից դուրս բլղխելով՝ գալիս պսպղում էր մեր առաջ ու գնում տարածելու գէպի դաշտի խոտերը:

Ու երկա՛ր մեզնից ոչ սք չը խօսեց: Ակնարկներս ցածում փուռոզ գաշտին, բերաններս փը-

չող դով քամուն, անշարժ՝ վայելում էինք բնութիւնը:

Բայց, ոչ մի մարդկային ձայն: Դա անսովոր էր ինձ համար: Չէր երևում ոչ մի բլբլ, որից այնքան վխտում էին դաշտի ամեն կողմում՝ տարիների առաջ:

Միթէ՞ այս անցն Արադան շէր, որ Մուսա աղան, իր հալատակ ու բարեկամ մանր, բազմաթիւ ցեղապետները, նրա որդիները՝ բազմաթիւ հետևորդներով՝ դարձրել էին շէն ու լի ամարանոց: Ա՛յն Արադան, որի հէնց այս բարձրից նայելով, ամէն կողմ ցոյց էր տալիս գոյնզգոյն վրանների կոյտեր. աջ կողմը, հորիզոնի բլուրների կողքին, աղայի կարմրագոյն տաղաւարն էր. դաշտի ամէն ուղղութեամբ արշաւում էին ձիաւորներ, մարդագետիկների վրայ կայտըում էին ձիեր և ամէն կողմից լսում էին աղմուկներ՝ երբեմն էլ մի ձգած լօ-լօ-ի հեռուոր մեղեգի, հովի սրնգի դայլայլը...

Այժմ և ոչ մէկը: Ետ հեռու միայն, սևին էին տալիս մի քանի վրանանման բաներ. գետեղրում, դանդաղ, գլուխնին կախ՝ հինգ-վեց կովեր, և, հազիւ ուրեմն, ուժգնութեամբ կրապոզ խոտերի շարժումները վկայում էին, որ անցնում է մի ձիաւոր կամ կայտուում մի ձի...

Տարօրինակ կերպով ճնշում էր սիրտս այդ

ամայութեան առաջ: Նստում եմ, ելնում, աշխատում եմ, գիտակով լինի, որոնել Մահմուդ աղայի վրանները, Մուսա-աղայի մեծ տաղաւարը, բլուրների վրայ արածող հարիւրաւոր ոչխարներից կազմւած հօտերը գտնէ... Ճգնում եմ խոտերի շարժումներից լժեղ դաշտի մէջ եղած կենդանութեան մնացորդները, բայց գտնում եմ միայն ամայութիւն, անշարժութիւն՝ մարդահասակ խոտերի անտառի մէջ և դատարկութիւն՝ մի ժամանակ վրաններ գտնուող բացւածքներում:

— Աբաղան չէ՞ այս հարցնում է ընկերս, որ առաջին անգամն է մտնում այդ կողմերը:

— Չը գիտեմ. ասում եմ շարած — Դաշտը նոյնն է, բայց միջի կենդանութիւնը չը կայ: Կարծես սառել է Աբաղան:

Ու հեծնում ենք, լուռ իջնում գէպի դաշտը:

— Այդպէս եթէ գնայ, խօսեց ընկերս — գիշերելու տեղ չը պիտի գտնենք. իսկ դու ասում էիր որ այս դաշտը լի է վրաններով, լի ընկալիչներով:

— Սառել է Աբաղան. մրմնջում եմ ճնշւած:

Այդպէս է. սառել էր կենդանի դաշտը: Մի ամբողջ ժամ քայլեցինք, թաղեցանք խոտի անտառի մէջ, կտրեցինք գոյնզգոյն մարգեր, անցանք վճիռ վտակներ, ելանք ու իջանք բլուր-

ներ և սակայն ոչ որ մեր գէմը չը դուրս եկաւ, ոչ մի քիւրդի բօլոյ չը տեսանք, եթէ չը հաշուենք մի քանի նախորդների, որոնք մեր անցնելիս ցցուում էին հեռում և անշարժ՝ մեզ նայում մինչև անհետանալը:

Հօտեր իսկ չը կային: Նախորդների շուրջը, մարգերի վրայ մի քանի տասնեակ ոչխարներ, գլուխնին միմեանց մէջքի՛ նիրհում էին. մի քանի դոյզ շներ՝ հազիւ մի աչքն էին բաց անում մեզ հետեւելու և մացառուտների մէջ մի քանի կովեր՝ որոնք և ոչ իսկ նայում էին մեր կողմը:


— Ո՞րտեղ ենք գնում. հարցնում է ընկերս — վերջ չունի՛ այս դաշտը:

— Այդ հեռուի վրանները:
Այնտեղ, մի խումբ ցած, սե. խղճուկ վրաններ էին երևում միայն. ընդամենը 5—6 հատ, ծածկւած մաղեղէն գործւածքներով կամ թաղիքով: Մնում էր այնտեղ գնալ գիշերելու, եթէ միայն ընդունէին մեզ:

Չը գիտէի իսկ ինչ էին: Քիւրդեր կը լինէին — դա պարզ էր: Բայց ինչ քիւրդեր. մնացորդ սր ցեղի և սււմ մարդիկ արդեօք:

Ու մի ժամ յետոյ, անցնելով մի առակից, մտնում էինք վրանները:
Շները նախ մեզ գիմաւորեցին. յետոյ կրե-

1007
9044



ւացին մի քանի մերկանդամ սեամորթ մանուկներ, մի երկու քիւրդ կանայք և վերջապէս մեր առաջն ելաւ մի նիհար ծերունի, որ կասկածառաշքերով գննեց մեզ, թողեց որ իջնէինք ձիացու անշարժ կանգնած մնաց իր վրանի առաջ:

— Բարև, ծերունի. դոչեցի ևս—հիւր չէք կամենալ:

— Համեցէք. ասաց նա:

Եւ նկատում էի, մեր գէնքերն էր գննում բաւական կասկածանօք, մեր գէնքը գիտում. կարծես փնտրում էր գիտենալու՝ թէ ինչ էինք մենք:

VI

... Ու երբ հիւրասիրել էր մեզ, տխուր և մռայլ եղիլի քիւրդ ծերունին հարցրեց մեր գնալու տեղը:

— Վան. ասացի ևս:

Գրուխը երեքրեց: Վանում կեանքը լաւ գրովժեան մէջ չէր. աղմուկ կար, արիւն էր հոսում. տւելի լաւ կանէինք չը գնալ այնտեղ, եթէ միայն մենք ևս, կայծը վառ պահելու վառօդի հատիկներ: չէինք:

— Ձեմ հատկանում, ծերունի. ասացի—
ինչ ևս ուզում ասել:

— Դուք հայեր չէք:

— Ո՛չ, ուսու ենք:

Լուեց: Պարզ էր որ չէր հաւատում:

Վաղուց ի՛ վեր եղիլի քիւրդերի այդ խումբը բնակւելու էր դալիս Արաղայում, երբ շոգերը սկսում էին Բայազիդի կողմերում: Վան չէր եղել, ոչ. բայց անցնողներից լուրեր ունէր: Իրենք կախ, արիւն չէին սիրում. խաղաղ ապրող ցեղ էին և չէին կամենալ խառնուել ուրիշի գործերում:

Աւ հասարակ հիւրընկալս սակաւախօս էր, մռայլ և տխուր, գրէթէ չէր ժպտում: Վրաններումն էլ մռայլ էր տիրում. ոչ մի աշխուժութիւն, ոչ մի աղմուկ կամ շարժողութիւն:

— Ի՞նչ է եղել Արաղային. հարցրի ես վերջապէս—հինգ վեց տարի առաջ եղել եմ ես այս կողմերում, հիւրասիրել Մուսա աղայի մօտ: Արդեօք այդ էլ - աղասին և նրա որդիները, Մահմուդ աղան կամ Օսման և Ջափար աղաները այդ ևս Արաղա չէն գալիս ամառը: Այժմ կարծես ամայի, դատարկ է Արաղան:

Տարօրինակ կերպով ինձ նայեց ծերունին պահ մի, յետոյ ասաց.

— Այո, դատարկ է, ինչպէս դատարկ է լինում փշերից մարդւած արտը՝ մինչև ցանելը... Բայց իմ աղան չը գիտէ թէ ինչե՛ր են կատարում այս և մեր երկրի ուրիշ դաշտերի վրայ:

Եւ երբ ասացի որ ոչինչ չը գիտեմ Արա-

դայում եղածներից, ժպտեց, լուռ՝ մտածեց մի բոպէ և ասաց ծանրութեամբ.

— Թէ իմ աղաները կուզեն, ես նրանց մի հրգ կը երգեմ: — Այդ երգը լսել եմ մի քիւրդ երգչից, որ անդադար ման է գալիս աշխարհից-աշխարհ ուր քիւրդ կայ և երգում է իր երգը:

Յետոյ ելաւ և հրաւիրեց մեզ նստելու բիշ հետու, կանաչ խոտերի վրայ:

Արևը մայր էր մտնում, ամայի դաշտը մթնում էր հեռո՛հեռէ և աւելի լուռ կերպարանք ստանում, դադարել էին թաշունների ձայները, մշուշի մէջ թագնւում էին հեւաւոր կատարները և բլուրները:

Եւ երբ տեղաւորել էինք, ծերունին սկսեց երգել: Ու նրա դողոջին ձայնը, որ չունէր ոչ մի հլ և էջ, հնչում էր միաձայն, թարմ օդի մէջ տխուր և հանդարտ՝ նման քրդական սրնգի խուլտ շշուկին:

... Եւ աշտերից, սարերից ու անտառներից հեռու — սկսեց նա — չը գիտեմ սր երկրում, սր թագաւորի հոգերում, ապրում էր մի ոչխար, որ մի օր յանկարծ աւաւթի վախեց...

„Ոչխար սո՛վ չի տեսել: Գլուխը կախած ուտում է և ոչ որի չէ վնասում. կուից միշտ խոսափում է և երբ մորթելու են տանում, դանակի տակ իսկ ձայն չէ հանում...“

„Մեկ շատ է պատահել ոչխար մորթել, եւ միշտ, երբ աչքերս ընկել է մորթւողի աչքին, կարծես ոչխարը ասել է մեզ. „ինչու էք տանջում ինձ. չէ՞ որ աշխարհս մեծ է, դուք էլ կարող էք ապրել, ես էլ. չէ՞ որ ձեզ արգելք չեմ լինում կեանք վարելու, ձեզ չեմ վնասում. ընդհակառակը միշտ կաթ ու իւղ եմ տալիս, բուրդ հասցնում. ինչո՞ւ էք ինձ մորթում, ոչնչացնում...“

„Եւ միշտ, որպէս նրան պատասխան, արգարացրել ենք մեզ, թէ ուտել ենք ուզում, պիտի քեզ մորթենք, որովհետև մեր ատամները միս ծամել, ձեռքերնիս յօշոտել են ուզում...“

„Ու մորթել ենք անխնայ, մտածելով որ ոչխարն ու եզը, տաւարն ու ֆլան ստեղծել են մեզ կերակրելու, մեզ ծառայելու...“

„Այդպէս էին համոզւած Մուսան ու Մահմուդը, Օսմանն ու Ջաֆարը, Օսմարն ու Շարաֆը... Եւ որովհետև այդպէս էին համոզւած, ոչխարը առիւծ դարձաւ և նրանց պատառտեց...“

„Զննել էք երբեք վառօդը՝ մօտից:

„Սե, աղտոտ, փոքրիկ մի հատիկ է նա:

Նետիր ուր կուգես, տրորիր ոտքիդ տակ, փակիր ամանի մէջ—ոչնչով չի ցոյց տաւ իր գործութիւնը: Խնարհ, փորձիկ, կծկած իր համար՝ միշտ կը մնայ և ոչ ոքի վնաս չի տալ:

„Բայց, փորձիր մէկ այդ խոնարհ հատիկի սրտին մօտեցնել մի կայծ. փորձիր այդ կայծը բաց թողնել մանաւանդ մի խումբ, միմեանց կողք—կողքի տաժ հատիկները մէջ և ի՛նչ կը տեսնես... Դիմացիր այն ժամանակ, եթէ կարող ես: Ոչ թէ միայն քեզ, ոչ թէ Մուսաններ կամ Շարաֆներ, այլ լեռ ու անտառ կը ցրէի, փոշի կը դարձնի և գլխիդ կը փեցնի...“

„Ու ոչխարը առիւծ դարձաւ, բաշն ու պոչը ցնցեց, ոտտնեց, ճիրաններ պարզեց ու որբան տանջող ունէր, մէկ մէկ պատառտեց, մէկ մէկ տրորեց...“

„Ու կայծն ընկաւ վառօղի մէջ, հատիկները կողք—կողքի տակն, կայծը քայլեց շանթի նման, յետոյ ծուխն ելաւ. լեռ ու ձոր քարուքանդ արեց ու ինչքան դայլ կար՝ տակովն արաւ, ինչքան բորենի կար՝ ցան ու ցրիւ տաւ...“

„Այդպէս է լինում, երբ կայծաբարին երկաթով ամուր են խփում, երբ հարւածը սրտի խորն է թափանցում:

„Այդպէս է լինում, երբ մոռանում են որ

ոչխարը կարող է մի օր առիւծի փոխել և այդ առիւծը ճիրաններ ունենալ:

„Այդպէս է լինում, երբ վառօղի հատիկները կողք—կողքի են տալիս և տանջաբների կայծը ընկնում է նրանց սրտի մէջ...“

Երգեց ծերունին ու լռեց:

—Երգը գեղեցիկ է, ասացի ես—երգը հրաշք չէ պատմում: Բայց, ի՛նչ ես կարծում, ծերունի, երկա՞ր արդեօք կայծը կը մնայ իր ընկած տեղում...“

—Չը գիտեմ. ասաց նա մտախոհ—այսբան միայն գիտեմ, որ քանի վառօղը չէ վերջացել, կայծը չէ հանգում. կրակը դատարկ տարածութիւն չէ սիրում...“

Յետոյ ելաւ, գէպի վրանը քայլեց և երբ հասել էր, կանգ առաւ, դարձաւ ու աւելացրեց:

—Եղիգին էլ մի երգ ունի, լսե՛ր էր...Նա այսպէս է սկսում:

„...Վառնը սալին, կռանը սալին, ոչ դատարկ գեանին...“



Դաշտը մթնում էր, մշուշը սևանում, քամին սաստկանում: Հեռու, չափ հեռու, երևի սև, ժայռոտ լեռներից, գուցե գայլը կամ գուցե մենակ մնացած սրև է գազան՝ տխուր ու երկար ունում էր մթութեան մէջ և երկնքի վրայի աստղերը մի առ մի վառւում—ցուրւում էին պլլապուն փայլով, գողգոջուն լոյսով...



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

«Ազգային գրադարան»



NL0370255

59.937

